

# ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՍԵՎԵՏՏՐՈՒԻ ԹԱՎԳԱՎԱՐԻ ԱԼԵԽԱԾԵՆՔ.

ԱՆՑՔ ԶՈՐԻՑ ԺԱՄՈՒՅՑ.

## Վ Հ Յ Ա Շ Խ Ա Ն

(Տեսարանն առաջի առևէ զդաճիճն կ դարպասի երուանցայ Արշակունեայ, յորոյ որմանց արեւելակողմանն է առուշան, ի միջակիսին բանի, եւ յուրքանակի ընդ որմագմոց, քազմեալ կան երուանդ էւ երուագ:)

ԵՐՈՒԱՆԴ ԵՎ ԵՐՈՒԱՋ.

Երուանդ:

Անուանելի է արքայի հերկութիւն,  
որ կշարժէ ամեն որ իմ բարկութիւն,  
ինչ է յականքս որ Հայր ով է յայտնի չէ,  
աւ բաւական որ մայրս յազատ տանէ է:  
Երուանդ.

Այդ խօսքերէն որ Ասնատրուկ կը խօսի,  
իմ սրախ մէջ արեան աղբիւր կը հսկի,  
Միայն զու չես մեր մօր ձնանդ, ես ևս եմ,  
ինչ քեզ ասուի ես ևս պիտի այն կիսեմ  
Երուանդ.

Միշտ ատելի է չիւ մարդոյն հայելին,  
Խռնեմութիւն չէ և գովկելն գովկելին,  
Արք գովկեալ կարէ զինզիւ այն մարդոյն,  
Ար ունի կիրթ հակառակ այն գովկեւոյն:  
Չոր որինակ մենք առեալ ենք Արքարին,  
Կարենք գովկել նրան հանգեց արքային,  
Առ յի ասիր թէ գուք նրան գովկելով,  
Իմ թերութիւնք կասատեաք կեզծելով:  
Ինքն յայտնի ինձ զէմ կածէ ձնազիս,  
Ար ամսամին լուսելով է ծնել զիս:  
Ամօք նոցա որք նրան կին չեն առել,  
Ոչ թէ հոգին, այլ միայն տեսքն են նայել:  
Երուանդ.

Ֆիրատի է, մեր մայր էր խօսա ձառագէմ,  
Բայց նորա խօսք ընտանեկան չէր ընդդէմ,  
Արշակունեաց ցեղէն գործ նա սերեալ:  
Արքունեաց մէջ միշտ պատուով էր մեծարեալ:  
Երուանդ.

Եղեսչոյ ափին նշիցն չեղինէ,  
Աներ հրաման յԱրքար արքայ իւր առնէ,  
Արքով պատուով յարգել տիկին մեր մայրը,  
Որուն արքայն կսիրեր որուն իւր քոյրը:  
Երուանդ.

Իմ միոքս է որ մենք դարպաս կերթայինք,  
Արքայորդոց հետ գրասունք կանչինք,  
Տգել էինք, ինչպէս և այժմ չենք չքհաղ,

Բայց մեղ երբեք առաջ չկայցր մի գայք խաչ:  
Ինչպէս չքեղ պատանի էր Անոնէ,  
Եւ առա տարով երիցագոյն էր մեղնէ,  
Մեղ խաղակից ինելէն բնաւ չեր խօս տար,  
Անգոստելց երբեք ոչ առաջ չեր ցոյց տար:  
Երուանդ.

Մի թէ առ քիչ է մեր հետ խաղացել,  
Ըմբաւամարտի, բանամարտի մէջ մըսել,  
Ի հարկէ ես նրան խայթել լուզկի,  
Առա թէ ոչ ամեն օր տի գլորէի:  
Առ իմ ուժին յիներորդ մասն ևս լունէր,  
Ըմբաւամարտին մէջ միշտ յազթած տի ւնիէր,  
Վասն որց երբ մեր մէջ խմբէր գտնամարտ,  
Անվերց կը լինէր մեր երկուսի ըմբաւամարտ:  
Երուանդ.

Միթէ նոր անց չեր մէջ տեղի ունեցաւ,  
Երուանդ.

Այսօր Հասմոյ գեսպանին հաչ արուեցաւ,  
Ես ևս էի բազմականի մէջ նուսած,  
Սանատուուկ էր մէ քիչ գիտով զուարթացած,  
Ճան յերկորեց, գեսպանն զատմէց յնի անցքէր,  
Արքայն անսի առաջ իմ գէմ նոր նետեր:

Երուանդ.

Ինչ նետ կարեր առնուլ արքայն այն տեղէն,  
Երուանդ.

Ականչ գիր որ իմանաս բանն ի գլխէն,  
Գեսպանը շատ գովասանեց Հասմուլ,

Նորա խօսքով գեղ անգամ յէ Մֆրինը,

Հակառակոս յիսուն տարի վազագոյն,

Պարթենալզ առել էր իւր որերոյն,

Ազիսակիրու եմ ստացել ես Հասմուլ,

Մարմարիսն, Պորփիր, կձեայ կթազում:

Կերոր կայսրը հրձիդ արել այրել է,

Եւ աւելի գեղեցկազարդ շինել է:

Արքայն հարցուց, թէ Հասմուլ ով է հիմնել,

Գեսպանն ասաց, հովիներ են այն շինել:

Սանատուուկը այս խօսքէն շատ զարմացաւ,

Եւ զեսպանին խօսքն երկարի միթ տուաւ:

Խօսքոյ մէջ գաւառի թագաւար,

Արց անոնս որպէս թէ էր Նումիտոր,

Մեր լինելով յանձնել է իւր եղորուլ,

Իւր գոտեր հետ արքայական աթոռը:

Նոր այս արքայն յայտնուել է բանաւոր,

Անդը Շութեամբ բանտարկել է ծեր եղորուլ,

Դատերն ևս մէջ այնպէս տեղ է պահել,

Ար նա երբէց չէ կարող մարդ տեսանել:

Բայց աղջիկը գեսպայ գտել է գազունի:

Երկու արու զաւակ ծնել է յայտնի:

Բանաւորը այս նորաժին զաւակաց,

Հրամանը է գեղ գետ որը նեթաց,

Ազիք պաշտոն գէմ ի գետափն են հանել:

Այս ողջոյց մէջ հատ հոգին է գտել,

Եւր զաւակաց հետ պահելով միխանին  
Զարգարյել է հովուաց մէջը երկուսկին,  
Մէկի անուն Հռոմեաց է դըրել,  
Եւ երկորոշին Հռոմեա է յորչողել,  
Սովոր բարուք կայտառ և սէգ լինելով,  
Խաղակից տղոց կը նէղէին ձեծելով.  
Հասակակիցք մէկ հնար են մոռածել,  
Այս երկուսին իրանց մէջէն հեռացնել.  
Ասել են նա միայն մոնի մեր խաղը,  
Ով որ կարէ անուանել իր ձընողը:  
Հըրոմուլու և Հըրումոս զիխակոր,  
Մկուլ են ինչդիք առնել հօր և մօր,  
Եատ պարելով գտել են ժեր արքային,  
Հովուաց նպաստ տալով դրել յիւր գահին,  
Ապս գտել են և իրեանց կորած մայր.  
Որոյ համար ժեր թագաւորն միշտ սըդայր—  
Նումիտորը փոխարէն այս երախանեաց,  
Կըր թռուներուն տուել է տեղ ի շնուած,  
Նուքս հովուաց ձեռնատութեամբ հիմնել են  
Այն տեղ քաղաք, որ և Հռոմ կոչել են:  
Անսատրուկը ժիժաղելով ինձ նայեց,  
Ջեռին բռնած սոկի բաժակին բարձրացրէց,  
Ասաց նա թող միայն խըմէ բաժակէն,  
Ով որ իւր հօր անուն կասէ յայտնապէն,  
Այս որ ասաց տուեց բաժակին Արքամին,  
Արքամ իւր հօր անուամբ խնեց այն գինին,  
Ենուոյ կարգաւ խըմէցին միւս իշխանքը,  
Որ ասացին զիւրեանց ժնողաց անուանքը.  
Ամեներեան դիտէին որ այս ամեն,  
Արքայն հնարեց, որ իշխանք ինձ ժաղը անեն,  
Ես լուս և եր կը նայէի վերջ բանին,  
Արքայն լցրեց բաժակի մէջ իւր գինին,  
Եւ ասաց ինձ, Նրուանդ ասս հօրդ անուն,  
Կարգը հասաւ, որ գու խմեն յիմ գինույն  
Ես ասացի հօրս անունն է Սուրբ, Նիզակ.  
Եւ ձեռս իսկոյն կարկառեցի առ բաժակ.  
Ոսկի բաժակին շրթանց կողմէն բռնեցի,  
Ներքի կողմէն եր ի ձեռին արքայի  
Երբ քարշեցի, ըմբռնետղն կոտրեցաւ,  
Գինին, որ մէկ կաթէլ ի վայր չկաթեցաւ,  
Ես խմեցի, բաժակին ձեռամբ հմեցի,  
Գնուակի պէս նորա առնէ ձգեցի  
Արքայն տեսաւ ձեռին կոտրած բաժակը,  
Այլ տարաւ գէպ իւր գոտուց գաշնակը.  
Եռու նայելով վրէն թողի արքունքը,  
Իմ յետէն ելան և այլ իշխանքը  
Երուաղ.

Այս հեքնութեանց այլ ևս պիտի համբերեա,  
Իշխանաց մէջ ինչ կունենանց մենց երես.

Իմ կարծեօքս, շատ լաւ է որ գաղթական,  
Կորչինք, երթանք մէկ այլ երկիր հեռաստան,  
(Արգամ ներս մուա.)

(Եպուանէնէլէ)

## Ա Զ Գ Ա Յ Ի Ն

ՏԻԿԻՆ ՄԱՐՄԻՆՄ Գ, ԻԶՄԻՐԵԱՆ.

Գաղլարեցի Բարեպաշտուհի տիկին Մարիամ՝ Գաղլարեան Իղմիրեանց երկու հազար ոռուբլի նուիրեց Գաղլարու Հայոց օղիորդաց դպրոցին յանուն և ի յիշատակ հանգուցեալ առն իւրոյ Գաղլուստի Իղմիրեան :

Երանինէ այնո՞ւ որ գիտելով ազգին այժմեան անհրաժեշտ պէտքը և կարօտութիւնը՝ Հայ մանկուոյն դաստիարակութեան՝ զարգացման և յառաջադիմութեան համար հոգւով չափ կըղճանայ նուիրաբեր լինել և բարերար հանդիսանալ, որպիսի առաքինութիւն ոչ միայն հաճելի և սիրելի Աստուծոյ, այլ և մեր փրկութեան և Եկեղեցւոյ պայծառութեան և փառաւորութեան առաջին միջոցն է: Ուստի կդովեմք նոյն առաքինասէր Տիկնոջ բարի եռանդը և նպատակը, որով միանգամայն թէիւր և թէ հանգուցեալ կողակցին անունը և յիշատակը անմահ փայլեցուց և փառաւորեց, և մեր, Գաղլարաց մերազնէից և համայն Հայորդարոյն շնորհակալեաց արժանացաւ, զոր հրապարակաւ յայտնելով, կը բաղճամք նոյնպիսի նուիրատու Տիկնայք և Պարոնայք յաճախ տեսնել յօգուտ և ի նըպաստ յաւելման և զարգացման տաճա-